իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Զանջուղալյան

Կատարող՝ Ա. Ալվազյան, հեռ. 595-227

N034/5753-12
6.03.12p



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

4/20.12

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

6.03.12 N ԴՔ/22/1774-12

Ձեր N _____

« ՀԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 02.03.2012թ թիվ 15/15.4/2778-12 գրության կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ «Հանրապետության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտորդություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

Դեղորայքային քաղաքականության բաժին
Կատարող՝ Ն. Փախախչյան
Հեռախոս 52 27 21

N 020/5736-12
6.03.12թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ 4/20.12

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

N 226/3-6/1802-12
2.03.12թ.

«Հ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. մարտի 2-ի համար 15/15.4/2778-12 գրությամբ կարծիքի ներկայացված «Հ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Կալրարող՝ Վ. Սարգսյան
Միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

N 044/5441-12
2.03.12թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

մարտի 2012 թվականի N Մ-...-Ա քաղ. երևան

4/20.13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի N Մ-671-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2012 թվականի փետրվարի 27-ի թիվ 51 գրությունը ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի -ի N 3/3.8-1/11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի մարտի -ի N 3/3.8-1/11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն աղընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի -ի N 3/3-4/11 եզրակացությունները, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 5-ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի կահավորում» ծրագրի մասին» N Մ-671-Ա (2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-852-Ա, 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1103-Ա և 2012 թվականի փետրվարի 2-ի N Մ-071-Ա որոշումների խմբագրությամբ) որոշման 1-ին և կից ծրագրի 6-րդ կետում բյուջեն դարձնել 317.496.390 դրամ (ծրագրի լրամշակված տարբերակը կցված է).

2. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված՝ ստորև նշված բեռները ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում՝

1) լուսարձակներ և լամպեր լույսի նեղ ուղղվածությամբ (11 տեղ, 1.583 կգ ընդհանուր քաշով, 183.622 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 784.718, ԱՄՖ Տ/Մ),

2) երեսպատման կերամիկական սալիկներ (18 տեղ, 20.189 կգ ընդհանուր քաշով, 8.768.76 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1.708.800 դրամ, «Արարատյան» Տ/Մ),

3) բժշկական մահճակալներ, պահարաններ, սեղաններ, հենակներ (18 տեղ, 9926.1 կգ ընդհանուր քաշով, 87.420 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1.164.480, «Արարատյան» Տ/Մ),

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն աղընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Վաղարշապատի քաղաքպետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ է... ՍԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՒՐԵ ԷՋՄԻԱԾՆԻ ԿԱՐԴԻՆԵՏԵԱԿԱՆ ԲԱԾԻՒ ՏՆՕՐԵՆ Տ. ՍՈՒՇԵՂՆԵՐԻ ՍԿՈՂՈՍ ԲԱՐԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ «27» 2012թ.

«Սուրբ Ներսես Մեծ» բժշկական կենտրոնի կահավորում Շ Ր Ա Գ Ր Ո 4/20.13

Table with 2 columns: No. and Description. Row 1: 1. Ծրագրի նպատակը. Row 2: 2. Ծրագրի բարեգործական որակման նպատակները. Row 3: 3. Բարեգործը (բարեգործները). Row 4: 4. Ծրագրի կատարողը. Row 5: 5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը. Row 6: 6. Ծրագրի բյուջեն. Row 7: 7. Բարեգործություն ստացողը. Row 8: 8. Ծրագրի իրականացման տևողությունը. Row 9: 9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները. Row 10: 10. Չեղջեղվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

4/20.13

0010, Երևան, Մեխիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

1.02.2012թ. № 3/3.8-2/2363-1

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 28.02.2012թ. N15/15.8/2523-12 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 5-ի N Մ-671-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ անհրաժեշտ է ներկայացված որոշման նախագծի 2-րդ կետում նշել նաև բարեգործական բեռն ուղարկողի տվյալները:

Հարգանքով՝

Ա. Ե. Ել

Ատոմ Զանջուղազյան

- 7) ուղեգրագրեր 450քմ, 1800 կգ, գինը 22,500 ԱՄՆ դոլար կամ 8,226,450 դրամ, մաքսատանը վճարված գումարը 27,395 դրամ, ձևակերպվել է Արարատյան S/Մ-ում, C22713, առ 26.07.2011թ.:
- 8) Ուռլոգիական լաբորանտիկ սարք, բրուտո քաշը 230 կգ, գինը 25,000 Եվրո կամ 12,979,500 դրամ, ճանապարհածախսը 668,719 դրամ, մաքսատանը վճարված գումարը 6000 դրամ, ձևակերպվել է «Ջվարթնոց» Ս/Տ-ում, C 16831, առ 02.11.2011թ.:
- 9) Երեսապատման սալիկներ՝ մամլված գրանիտ, բրուտո քաշը 21340 կգ, գինը 22,489.53 Եվրո կամ 11,247,914 դրամ, ճանապարհածախսը 1,223,475 դրամ, մաքսատանը վճարված գումարը 28,600 դրամ, ձևակերպվել է Արարատյան S/Մ-ում, C 31005, առ 28.09.2011թ.:
- 10) Գրանիտե սալիկներ, երեսապատման սալիկներ՝ պրեսգրանիտ, հեռախոսներ լարով, լուսատուներ, բրուտո քաշը 11200 կգ, գինը 44,377 ԱՄՆ դոլար կամ 16,774,950 դրամ, մաքսատանը վճարված գումարը 27,400 դրամ, ձևակերպվել է Արարատյան S/Մ-ում, C 35146, առ 27.10.2011թ.:
- 11) Խոհանոցային և լվացքատան տեխնիկա, բրուտո քաշը 5673 կգ, գինը 122,988.26 Եվրո կամ 64,723,802 դրամ, ճանապարհածախսը 1,727,595 դրամ, մաքսատանը վճարված գումարը 74,600 դրամ, ձևակերպվել է Արարատյան S/Մ-ում, C 37237, առ 10.11.2011թ.:
- 12) Պոմպ ջրի բաղկացուցիչ մասերով, բրուտո քաշը 722 կգ, գինը 5,744.1 Եվրո կամ 2,912,661 դրամ, ճանապարհածախսը 253,535 դրամ, մաքսատանը վճարված գումարը 11,500 դրամ, ձևակերպվել է ՄՓՏ Տ/Մ-ում, C 12346, առ 01.12.2011թ.:
- 13) Մետաղական բժշկական թթվածնային գազի բալոններ, բրուտո քաշը 171 կգ, գինը 1,256.8 ԱՄՆ դոլար կամ 480,462 դրամ, ճանապարհածախսը 728,262 դրամ, մաքսատանը վճարված գումարը 6,500 դրամ, ձևակերպվել է ՄՓԵՆԱՍՄՍ Մ/Տ-ում, C 12948, առ 16.12.2011թ.:
- 14) Լուսարձակներ և լամպեր լույսի նեղ ուղղվածությամբ, բրուտո քաշը 1,583 կգ, գինը 183,622 Եվրո կամ 92,336,159 դրամ, ճանապարհածախսը 382,430 դրամ, այլ ծախսերը 402,288, մաքսատանը վճարված գումարը 23,600 դրամ, ձևակերպվել է ՄՓՏ Տ/Մ-ում, C 13405, առ 22.12.2011թ.:
- 15) Երեսապատման կերամիկական սալիկներ, բրուտո քաշը 20189 կգ, գինը 8,768.76 Եվրո կամ 4,419,893 դրամ, ճանապարհածախսը 1,708,800 դրամ, մաքսատանը վճարված գումարը 17,500 դրամ, ձևակերպվել է Արարատյան S/Մ-ում, C 44146, առ 29.12.2011թ.:
- 16) Բժշկական մահճակալներ, պահարաններ, սեղաններ, հեմակներ, բրուտո քաշը 9926.1 կգ, գինը 87,420 ԱՄՆ դոլար կամ 33,932,947 դրամ, ճանապարհածախսը 1,164,480 դրամ, մաքսատանը վճարված գումարը 29,400 դրամ, ձևակերպվել է Արարատյան S/Մ-ում, C 910, առ 16.01.2012թ.:

11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ԳՀ քաղաքաշինության նախարարության, Առողջապահության նախարարության, Երևանի քաղաքապետարանի և «Այգեծոր» ՍՊԸ-ի հետ:
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ԳՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

4/20.13

« 1 » Տարվի 2012 թ.

N 89/ՁՁԾ-5/1404-12

Ձեռ 2012-02-28, 15/15.8/2523-12

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 5-ի N Մ-671-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին» որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

Հարգանքներով՝

Տ. Բերիկյան

040/5248-12
1.03.2012թ

Կատարող՝ Միջազգային կապերի բաժին
հեռ.563-791

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 65, ֆաքս. (374 10) 54 31 60 <http://www.mss.am>



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

N: ՁՁ/3-Ե/1664-12
29.02.2012թ

4/20.13

**ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. փետրվարի 28-ի համար 15/15.8/2523-12 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 5-ի N Մ-671-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱՆՎԵՐԴՅԱՆ

Կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

044/5028-12
29.02.2012թ.

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 5-ի N Մ-671-Ա որոշման մեջ և կից ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին» (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին) որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բավանդակությունը	Հիմնավորում
<p align="center">ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ</p> <p>Դիտողությունը հաշվի է առնվել, նախագիծը լրամշակվել է:</p> <p>- անհրաժեշտ է ներկայացված որոշման նախագծի 2-րդ կետում նշել բարեգործական բեռն ուղարկողի տվյալները:</p>	

4/20.13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՆԱԽԱԳԻԾ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
 2012 թվականի N Մ- -Ա
 քաղ. երևան

4/20.14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-883-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի -ի N 3/3.8-2/ -12 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի -ի N ԱԱ/3-6/ -12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Մատենադարան» Մետրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում» N Մ-883-Ա որոշմամբ (2012 թվականի հունվարի 20-ի N Մ-065-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

- 1) 8-րդ կետում «31.12.2011թ.» բառերը փոխարինել «01.04.2012թ.» բառերով
- 2) 10-րդ կետի 5.4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
 «5.4 անվտանգության համակարգ 17000000».
- 3) 10-րդ կետի 5.2 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
 «5.2. օդափոխության և ջեռուցման համակարգ 52000000»:
2. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից բերված ստորև նշված տեսահսկման համակարգի ապրանքները ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում.
 - 1) 6 տեղ, 4653.3 կգ ընդհանուր քաշով, 61398 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 4150 եվրո, ՄՓԵԱՍՓԱՄ մաքսատուն.
 - 2) 13 տեղ, 2873 կգ ընդհանուր քաշով, 40987 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 5800 եվրո, ՄՓԵԱՍՓԱՄ մաքսատուն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

4/20.14

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

28.02.12 №3/3.8-2/2274-12

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 24.02.2012թ. N15/15.1/2365-12 գրությամբ ներկայացված Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի NU-883-Ա որոշմամբ հաստատված
ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Մատենադարան» հիմնադրամ) ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման
նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ վերը նշված որոշմամբ հաստատված ծրագրով ևս
112,335.00 եվրոին համարժեք 57,423,201.00 ՀՀ դրամ օգափոխության համակարգերի
ներմուծման դեպքում դրանց ընդհանուր արժեքը կկազմի 83,727,616.00 ՀՀ դրամ, որը
նախարարության հաշվարկներով գերազանցում է ծրագրով նախատեսված նմանատիպ
բեռների ներմուծման ծախսերը մոտ 5,727,616.00 ՀՀ դրամով (83,727,616.00-
78,000,000.00):

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք ծրագրում կատարել
համապատասխան փոփոխություններ:

Հարգանքով՝

Ատոմ Զանցուղազյան

ՕԶԿ/5011-12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

4/20.14

ԱԿԻՅ-6/1548-92

24.02.12

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. փետրվարի 24-ի համար 15/15.1/2365-12 գրությամբ կարծիքի
ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի N Մ-883-
Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին
(«Մատենադարան» հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ
առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՕԿԿ/Կ 757-Կ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
21 հոկտեմբերի 2011 թվականի N Մ- 883 -Ա
քաղ. երևան

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ», ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՏԵՆԱ-
ԴԱՐԱՆ» ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈ-
ՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԵՎ ՇՐՋԱԿԱ
ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՐՈՒՑՈՒՄ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (2-ՐԴ ՓՈՒԼ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 3/3.8-1/86138-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 19-ի N 6605-11, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2011 թվականի հոկտեմբերի 19-ի N 03/07-1/12006-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 18 -ի N ԱԱ/3-4/7397-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է .**

1. Բարեգործական որակել «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում՝ 740450000 դրամ արժողությամբ ծրագիրը (2-րդ փուլ) (կցվում է):


2. «Մատենադարան» հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված

ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:




Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

4/20.14

4/20.14

FUND “MATENADARAN”
 10-2 North ave.
 0010 Yerevan, Republic of Armenia
 Tel/Fax +374 10 500172
 e-mail: tempo2006@yandex.ru



ФОНД “МАТЕНАДАРАН”
 Республика Армения
 г. Ереван 0010, Северный просп. 10-2
 Тел/Факс +374 10 500172
 e-mail: tempo2006@yandex.ru

N. 25

02 մարտի 2012թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
 ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
 պրն. Ս.ՏԵՐ-ՄԻՍՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Միսոնյան,

Խնդրում եմ Ձեզ, Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. հոկտեմբերի 21-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում» ծրագրի մասին N Մ-883-Ա որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. 10-րդ կետի 5.4 ենթակետը շարադրել հետևյալ կերպ՝
 5.4 անվտանգության համակարգ 17 000 000
2. 10-րդ կետի 5.2 ենթակետը շարադրել հետևյալ կերպ՝
 5.2 օդափոխության և ջեռուցման համակարգ 88 000 000
3. 8-րդ կետը շարադրել հետևյալ կերպ՝
 8. Ծրագրի ժամկետը երկարացնել մինչև 01.04.2012թ.

Կանխավ շնորհակալ եմ

Գործադիր



Հ.Չիթչյան

406

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
 ԵՍՏՆԱԿԱՅԷ
 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
 Մ.ՉԻԹՉՅԱՆ
 Մ.ՉԻԹՉՅԱՆ
 02 03 2012

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի N Մ-883-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Մատենադարան» հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ

Հիմնավորում	Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը
ՀՀ ֆինանսների նախարարություն – 28.02.12, N 3/3.8.8-2/2277-12	
1. Նախագծում կատարված են համապատասխան փոփոխություններ	<p>1. Վերը նշված որոշմամբ հաստատված ծրագրով ևս 112,335.00 ելիտին համարժեք 57,423,201.00 ՀՀ դրամ օրավիճակում համակարգերի ներմուծման դեպքում դրանց ընդհանուր արժեքը կկազմի 83,727,616.00 ՀՀ դրամ, որը նախարարության հաշվարկներով գերազանցում է ծրագրով նախատեսված նմանատիպ բեռների ներմուծման ծախսերը մոտ 5,727,616.00 ՀՀ դրամով (83,727,616.00-78,000,000.00):</p> <p>Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք ծրագրում կատարել համապատասխան փոփոխություններ</p>

4/20.14



ՀՀ կրթության և գիտության նախարարության "Մատենադարան" Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ ՊՈԱԿ գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցման աշխատանքների Ծրագրի (2-րդ փուլ)

4/20.14

1	Ծրագրի նպատակը	Մատենադարանի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցման աշխատանքների իրականացում
2	Ծրագրի բարեգործական որակյան նպատակը	Ծրագրի շրջանակներում նախատեսված օրենքով սահմանված կարգով օգտվել Հանայաստանի Հանրապետության հարկային և մաքսային օրենքով սահմանված արտոնություններից
3	Բարեգործը	"Մատենադարան" հիմնադրամ (ք.Երևան, Հյուսիսային հողոտա, 10/2, հեռ. 50 01 73 ՀՎՀՀ 027056657)
4	Ծրագրի կատարողը	"Մատենադարան" հիմնադրամ (ք.Երևան, Հյուսիսային հողոտա, 10/2, հեռ. 50 01 73 ՀՎՀՀ 027056657)
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 53, ՀՀ կրթության և գիտության նախարարության "Մատենադարան" Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ ՊՈԱԿ
6	Ծրագրի բյուջեն	740 450 000 / յոթ հարյուր քառասուն միլիոն չորս հարյուր հիսուն հազար դրամ/ 2-րդ փուլ
7	Բարեգործություն ստացողը	ՀՀ կրթության և գիտության նախարարության "Մատենադարան" Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ ՊՈԱԿ
8	Ծրագրի իրականացման տևողությունը	01.10.2011թ. - 31.12.2011թ.

20.15/4

	ԱՇԽԱՏԱՆԵՐ ԱՎԱՆՈՒՄ	ԳՈՒՄԱՐ /ԲՀ զրամ/	ԻՐԱՎԱՍԱՑՈՒՂ
9	1. Չեղիճակային հսկողություն և տեխնիկական վերահսկողություն (տող 1 + տող 2)	5 100 000	
	2. Հիմնարարական և ինժեներական համակարգերի աշխատանքներ (տող 3 + տող 4)	454 920 000	
	3. Հիմնարարական ապրանքների և սարքավորումների մեղմուծում	227 800 000	
	4. Հիմնարարական և այլ ապրանքների ձեռք բերում	40 800 000	
	5. Կազմակերպչական ծախսեր	11 830 000	
	ԸՆԴՈՍՆԵՑ	740 450 000	ԻՐԱՎԱՍԱՑՈՒՂ
10	1. Չեղիճակային հսկողություն (իսկաններ - ղեկավարներ 2011թ.)	2 190 000	"Սնայան Արքիտեկտ" ՍՊԸ
	2. Տեխնիկական վերահսկողություն (իսկաններ - ղեկավարներ 2011թ.)	2 910 000	"ՄԻՐԸ-ք Երևան" ՍՊԸ
	3. Հիմնարարական աշխատանքներ, այդ թվում՝	324 620 000	1. «Լյեբերտ Կարլսթանյան և Դորիներ» ՍՊԸ 2. «Բնագլուխ-ԷՄ» ՍՊԸ
	3.1 հողային և քանդակա աշխատանքներ	36 500 000	1. «Լյեբերտ Կարլսթանյան և Դորիներ» ՍՊԸ 2. «Բնագլուխ-ԷՄ» ՍՊԸ
	3.2 երկաթբետոն, երեսապատ սալիկներ, հատակի, առաստաղի, պատերի, միջնախարկերի և աստիճանավանդակների աշխատանքներ, արտաքին կոյուղի և ջրամատակարարում	197 330 000	1. «Լյեբերտ Կարլսթանյան և Դորիներ» ՍՊԸ 2. «Բնագլուխ-ԷՄ» ՍՊԸ
	3.3 դռներ և պատուհաններ	84 240 000	1. «Ալբրտյան-Ռոյտո» ՍՊԸ 2. «Կոնվեյնթ» ՍՊԸ
	3.4 սամիթի և այլ աշխատանքներ	6 550 000	"Փիզա" ՍՊԸ
	4. Ինժեներական համակարգերի աշխատանքներ, այդ թվում՝	130 300 000	«Մաստեր-Կլիմա» ՍՊԸ
	4.1 հովաքան, ինոուցան, օդի կարգավորման համակարգեր	57 000 000	
	4.2 էլեկտրատեխնիկական աշխատանքներ	30 000 000	«Էլեկա Տի Է» ՍՊԸ
	4.3 անվտանգություն, հեռահարդարակցություն, հորիզամարման համակարգի աշխատանքներ	30 000 000	"Հատուկ կամուրջներ" ՊԸԸ
	4.4 սառը և տաք ջրամատակարարման, մերջին ջրահեռացման աշխատանքներ	10 500 000	"Հատուկ կամուրջներ" ՊԸԸ
4.5 վերելակների մոնտաժման աշխատանքներ	2 800 000	«Մուրգի խոն» ՊՈԱԿ ԲԸԸ	
5. Ներմուծում, այդ թվում՝	227 800 000	«ՄՈՒՂ-Ք ԵՊՍՏ» ՊՈԱԿ ՍՊԸ	
5.1 մարմարե, կերամոզերի, գիպսատվարաբլոք սալիկներ, տամբրի սպարանգներ	57 800 000		
5.2 հովաքան, ջեռուցան, օդափոխության համակարգեր	78 000 000		

20.15/4

5.6 վերելակներ	19 տոն ուժով	
0. Չևաջ բերում, այդ բվում՝	40 800 000	
6.1 շին. ապրանքներ, բազալտ, տրավերտին, սոմ.ֆ. ցեմենտ, ավազ, պեմզաբլոկ, որմեր և այլն	40 800 000	
7. Կազմավերական ծախսեր	11 830 000	
ԸՆԴԱՄԵՆԸ	740 450 000	
1. աշխատավարձ և սոց. վճարներ	6 240 000	
2. գրանցված ծախսեր, այդ բվում բանկային և մաքսային ծախսեր	2 640 000	
3. պահանջարկային ծախսեր	1 200 000	
4. այլ ծախսեր	1 750 000	
ԸՆԴԱՄԵՆԸ՝	11 830 000	
		«Մասնագրարան» ֆինանսյան
Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ		
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերանայության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ

Պ.Խ. Խաչվազյան

 Ղ. Վարդանյան

4/20.14

20-15/4 ✓

ՆԱԽԱԳԻԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
 2012 թվականի Մ Մ - - Ա
 քաղ. երևան 4/20.15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի Մ Մ-1054-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԵԾՆ ՆԵՐՍԵՍ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի -ի N 3/3.8-2/-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի -ի N -12, Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի -ի N ՖԲ/ԱՆՄ-5/-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի -ի N ԱԱ/3-6/-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է:**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2012-2014 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1054-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 7-րդ կետը լրացնել «Բացի ընդգրկված շահառուներից նախատեսել ՀՀ Սոցիալական ապահովության նախարարությունում հաշվառման վերցված միայնակ տարեցներին, տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով սոցիալապես անապահով խավերին, գիշերօթիկ և մանկական կրթական հաստատություններին, ինչպես նաև Արարատյան Հայրապետական Թեմի Հայրորդաց տունը» բառերով:

2. Սահմանել, որ Միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված ռեսիդենտ կոչիկերը (Croc Shoes, 14 palet, 1755 կգ ընդհանուր քաշով, 58020 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 6800 ԱՄՆ-ի դոլար, բեռի նախնական բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի, Սյունիքի մարզպետներին:

Միացյալ Հայկական ֆոնդից առաջիկայում ստացվելիք մեկ բեռնարկի
 FCIU4391768, 1755 կգ. ընդհանուր կշռով, 58020 դոլար արժողությամբ 6800 դոլար
 փոխադրավարձով մարդասիրական օգնության ռետինե կոշիկների (Croc shoes)
 բաշխման նախնական ցանկ: Բեռը մաքսազերծելուց հետո կներկայացվի յուրաքանչյուր
 կազմակերպությանը տրվելիք օգնության քանակը (զույգ) և արժեքը:

4/20.15


ՔԱՆԱԿ ԱՐԺԵՔ
 (կգ.) (դոլար)

1. «Մեծն Ներսես» ԲՀԿ շահառուներ	795	29300
2. Նուբարաշենի թիվ 11 (հատուկ) օժանդակ դպրոց	50	1850
3. "Ջատիկ" մանկատուն	35	1295
4. Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր	50	1850
5. "Փոքր Միեր" կրթահամալիր	50	1850
6. Ե.Պ.Հ.-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց	70	2590
7. Վայոց Ձորի Թեմի "Սիրանուշ" ճամբար	95	3515
8. Արարատյան Հայրապետական Թեմի Մալաթիայի Հայրորդաց տուն	25	925
9. Արմավիրի մարզի Երվանդաշատ գյուղի սոցիալապես անապահով խավերի	75	2775
10. Կոտայքի մարզի Աղավնաձոր գյուղի Զ. Ղանիեյանի անվան միջն. դպրոց	75	2775
11. Արագածոտնի մարզի Աշնակ գյուղի միջնակարգ դպրոց	75	2775
12. Երևանի թիվ 62 միջն. դպրոց	35	1295
13. Արագածոտնի մարզի Կարբիի Վ. Թեքեյանի անվան միջն. դպրոց	95	3515
14. Երևանի Ռուսթավելու անվան թիվ 23 միջն. դպրոց	35	1295
15. Արմավիրի մարզի Այգեկ գյուղի սոցիալապես անապահով խավերի	50	1850
16. Արագածոտնի մարզի Մուղնիի Մ. Աշխանի անվան միջն. դպրոց	50	1850
17. Նորք Մարաշ վարչական շրջանի սոցիալապես անապահով խավերի	95	3515

ԸՆԴԱՄԵՆՈՒ 1755 64820

16.03.2012թ.

«Մեծն Ներսես» ԲՀԿ տնօրեն՝  Հարությունյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
 Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

4/20.15

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
 Հեռ. (+374 10) 59 52 26

6.03.12 № 3/3.8-2/2611-12

Ձեռ № _____

Հայաստանի Հանրապետության
 կառավարության բարեգործական ծրագրերի
 համակարգման հանձնաժողովի նախագահ՝
 պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 02.03.2012թ. N15/15.1/2859-12 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2012-2014 թվականներին իրականացվող բարեգործական ծրագրի մասին» ՈՒ-1054-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպություն) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

- կից ներկայացված շահառուների նախնական ցուցակում նշված կրթահամալիրները, միջնակարգ դպրոցները, Արարատյան Հայրապետական Թեմի Մալաթիայի Հայրորդաց տունը ընդգրկված չեն «Մեծն Ներսես» ԲՀԿ-ի կողմից 2011 թվականի նոյեմբերի 25-ի որոշմամբ հաստատված ծրագրում ընդգրկված շահառուների ցանկում, ուստի անհրաժեշտ է ծրագրում կատարել համապատասխան փոփոխություններ՝ դրանում ներառելով հիշյալ կազմակերպությունները, միաժամանակ նշելով այդ կազմակերպությունների ընտրության սկզբունքները, չափանիշները և սոցիալապես անապահով անմիջական շահառուների թվաքանակը,

034/5810-12

- անհրաժեշտ է որոշման նախագծի 2-րդ կետում ներառել նաև Երևանի քաղաքապետարանին:

Հարգանքով՝

4/20.15

Ատոմ Զանցուղայան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

4/20.15

« 6 » 03 2012 թ.

№ ԲՔ/ԵՊՈ-5/1523-12

Ձեռք 2012-03-02, 15/15.1/2859-12

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Քննարկելով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2012-2014թթ իրականացվող բարեգործական ծրագրի մասին» N Մ-1054-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպություն) որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

Հարգանքներով՝

Տ. Բերիկյան

010/5701-12

Կառարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

Կառարող՝ Միջազգային կապերի բաժին
հեռ. 563-791

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

DEPUTY MINISTER

ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

4/20.15



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

4/20.15

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Տեղ./Տել.: 58 03 02, ֆաքս/ֆաքս/ֆաքս (374 10) 52 73 43,
0010, Ерван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

ԱԿ/3-6/4859-12
5.03.12

«Կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

N 03/07-1/2261-12 Կ.ՕԶ -----2012

«Կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ի պատասխան Ձեր սույն թվականի մարտի 2-ի №15/15.1/2859-12 գրության՝
հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011
թվականի նոյեմբերի 25-ի «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական
կազմակերպության կողմից 2012-2014թթ. իրականացվող բարեգործական ծրագրի մասին»
N Մ-1054-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին
(«Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպություն)» որոշման
նախագծի վերաբերյալ «Կրթության և գիտության նախարարությունը իր իրավասության
շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

Ձեր ս/թ. մարտի 2-ի համար 15/15.1/2859-12 գրությամբ կարծիքի ներկայացված
«Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Մեծն Ներսես»
բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2012-2014թթ
իրականացվող բարեգործական ծրագրի մասին» N Մ-1054-Ա որոշմամբ հաստատված
ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Մեծն Ներսես» բարեգործական
հասարակական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք,
որ անհրաժեշտ է ներկայացնել տեղեկատվություն շահառուներին տրվելիք բեռի
քանակի և արժեքի վերաբերյալ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Մ.ՄԿՐՏՅԱՆ

Մ.ՄԿՐՏՅԱՆ

031/5946-R

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

044/5648-12

ՄԵԾՆ ՆԵՐՍԵՍ
բարեգործական հասարակական կազմակերպություն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Շ ՈՒ Մ

25 նոյեմբերի 2011 թվականի N Մ-1054
քաղ. երևան

«ՄԵԾՆ ՆԵՐՍԵՍ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ
ԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2012-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի նոյեմբերի 24-ի N 3/3.8-1/87988-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի նոյեմբերի 24-ի N 7534-11, Հայաստանի Հանրապետության աշխարհային և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի նոյեմբերի 23-ի N ՖԲ/ԱնՄ-5/9275-11 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի նոյեմբերի 23-ի N ԱԱՄ3-4/8596-11 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակելի «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2012-2014 թվականներին իրականացվող՝ 1150000 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ ծրագիրը (կցվում է):
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝ «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2007 թվականի մարտի 6-ին կնքված՝ N 011007617 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի հունվարի 1-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 900000 դրամի չափով: առանց ավելացված արժեքի հարկի:
3. «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝
 - 1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի

Երեվան Կոռյունի 6^ա բն. 1, հեռ. 560768, Էլ. փոստ St-nerscs@mail.com

4/20.15 16 մարտ 2012թ.

Հայաստանի Հանրապետության Կառավարության
Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովի
նախագահ՝ պրն. Ս. Տեր-Մինոնյանին

Մեծարգո Տեր-Մինոնյան,

Ի լրումն մեր 2012 թվականի մարտի 3-ի նամակի՝

Հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից կատարված դիտողությունները, խնդրում եմ «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2012-2014 թվականներին իրականացվող բարեգործական ծրագրի մասին» N Մ 1054 - Ա որոշմամբ հաստատված ծրագրի 7-րդ կետում շահառուների ցանկում ներառել նույն ծրագրի 1-ին կետում նշված կազմակերպությունները, ինչպես նաև Արարատյան Հայրապետական Թեմի Հայրդղաց տունը:


Ստացվելիք 1755 կգ., ընդհանուր կշռով 58020 դոլար արժողությամբ 6800 դոլար փոխադրավարձով ռետինե կոշիկների (Croc Shoes) վերաբերյալ ամբողջական տվյալների բացակայության պատճառով, բաշխումը շահառու կազմակերպություններին նախատեսում ենք կատարել կիրգրամներով՝ կից ներկայացվող նախնական ցանկի համաձայն:

Բեռի մաքսագերծումից հետո կներկայացվի բաշխման ցանկ սահմանված կարգի համաձայն:


Շահառու կազմակերպությունների ցանկը մեծամասամբ ներկայացվել է ծրագրի նովանավորի և առանձին բարեգործների կողմից:


Հաջողության լավագույն մաղթանքներով՝

«Մեծն Ներսես» Բ.Հ.Կ.
գործադիր տնօրեն՝



Ս. Հարությունյան






Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

4/20.15

պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն աղընթեր պետական եկամուտների կոմիտե:



2012-2014 թվականներին իրականացվող բարեգործական ծրագրի

<p>Մեղադրանք վճարող</p>	<p>Կազմակերպիչ գրեթե անհատականության կազմակերպիչներին և երկրորդային ընկերություններին 600 երեխաների ամենամյա 6000 դրամական և պարբերաբար ամսական օգնություն, 18 տարին լրացած երեխաների փոխարեն ծրագրում ընդգրկել անցանկալի մեծ երեխաների:</p> <p>Նախատեսվել է 2012 թվականից միավորումն օժտագրով սոցիալապես անապահ անչափահաս երեխաների, ինչպես նաև կազմակերպությունում հաշվառման վերջին գրեթե անհատականության 20-25 երեխաների, որոնք տվելու են բարեգործությունները հաստատություններում ամենամյա դրամական և պարբերաբար օգնություն մինչև 18 տարեկան ակադեմիկոսներին:</p> <p>Ծրագրի տեսքով ստացված օգնությունը հազարա, կաշիներ, կենցաղային իրեր և այլն է: Ստացված օգնությունը կօգտագործվի հարկազանց, բացի նրանցից, որոնք կօգտագործվեն շահառուներից մարտահանված ֆինանսական օգնությունները և այլն:</p> <p>Ծրագրի իրականացումը հաշվառման վերջին միջոցով սոցիալապես անապահ լինող երեխաների օգնությունը կազմակերպությունում կազմակերպություններին, ինչպես նաև Սյունիքի մարզի և մանկական կրթական հաստատություններին, ինչպես նաև Սյունիքի մարզի և մանկական կրթական հաստատություններին, ինչպես նաև Սյունիքի մարզի և մանկական կրթական հաստատություններին:</p> <p>Ծրագրի իրականացումը կազմակերպություններին երեխաներին:</p> <p>Ծրագրի իրականացումը կազմակերպություններին երեխաներին:</p> <p>Ծրագրի իրականացումը կազմակերպություններին երեխաներին:</p>
<p>Ծրագրի բարեգործական արակետն նպատակներն ըստ ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 16-ի № 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերի մեկն ծրագրերի» 3-րդ կետի պահանջները և գրանցելու կարգի» 3-րդ կետի</p>	<p>3-րդ կետի բ) ենթակետի համաձայն օգտվել հարկային և մարտնչություններից:</p>
<p>Բարեգործի (բարեգործներին)</p>	<p>ԱՄՆ-ի Արևելյան շրջանի կղզիկյան բնօրինակ Առաջնորդարանը:</p>

20.17/8.2

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1054-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրի շրջանակներում բերի ներդրման մասին («Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
<p>ՀՀ ֆինանսների նախարարություն – 06.03.12, N 3/3.8-2/2611-12</p> <p>- Կից ներկայացված շահառուների նախնական ցուցակում նշված կրթահամալիրները, միջնակարգ դպրոցները, Արարատյան Հայրապետական Թեմի Սպարթախի Հայրդրաց տունը ընդգրկված չեն «Մեծն Ներսես» ԲՀ-ի կողմից 2011 թվականի նոյեմբերի 25-ի որոշմամբ հաստատված ծրագրում ընդգրկված շահառուների ցանկում, ուստի անհրաժեշտ է ծրագրում կատարել համապատասխան փոփոխություններ՝ դրանում ներառելով հիշյալ կազմակերպությունները, միաժամանակ նշելով այդ կազմակերպությունների ընտրության սկզբունքները, չափանիշները և սոցիալապես անապահով անմիջական շահառուների թվաքանակը,</p> <p>- անհրաժեշտ է որոշման նախագծի 2-րդ կետում ներառել նաև Երևանի բարոյաբանատարանի:</p>	<p>1. Ծրագրում կատարված է համապատասխան քրացում</p>
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե – 05.03.12, N ԱԱ/3-6/1859-12	
<p>Անհրաժեշտ է ներկայացնել տեղեկատվություն շահառուների և սուբյեկտների բնույթի և արժեքի վերաբերյալ</p>	<p>1. Կցված է լրանջակված բաշխման ցանկը</p>

4/20.15

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
2012 թվականի N Մ - - Ա
բաղ. Երևան

4/21.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի N Մ-059-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԳՐԱՄ)

Հայասրանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայասրանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի -ի N 3/3.8-1/-12 և Հայասրանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի -ի N ԱԱ/3-4/-12 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 20-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Եռուստամարաթոն - 2012» ծրագրի մասին՝ N Մ-059-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վերսուս ստուդիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00842355) 2012 թվականի մարտի 1-ին կնքված՝ N Ծ-02/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեսաֆիլմերի և հաղորդումների պատրաստում՝ 30000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

4/21.1

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

14.03.12 № 3/3.8-1/2839-12

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին


Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 13.03.12թ. N 15/15.1/3209-12 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012թ. հունվարի 20-ի N Մ-059-Ա («Հայաստան» համահայկական հիմնադրամ) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի («Վերսուս ստուդիա» ՍՊԸ-ի հետ կնքված գործարք) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանչուղազյան

ՅԻԿ/6317-12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Ն Ա Գ Ա Հ Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

4/21.1

ՍԿ/3-4/2109-12
14.03.12

«Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 13.03.2012թ. թիվ 15/15.1/3209-12 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 20-ի N Մ-059-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Հիմք ընդունելով կից ներկայացված «Վերսուս ստուդիա» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը՝ առաջարկում եմ որոշման նախագծի 1-ին կետում պայմանագրի համարը «Ծ-12/12»-ի փոխարեն նշել «Ծ-02/12»:

Ա. Ալավերդյան

ՍԿ/6358-12

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 20-ի N Մ-059-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարկվից գործարքի մասին («Հայաստան» համահայկական էիմենտորան)» որոշման նախագծի վերաբերյալ

Գիտության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե -14.03.12, N ԱԱ/3-4/2109-12	
1. Հիմք ընդունելով կից ներկայացված «Վերտուս առուրիա» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիրը՝ առաջարկում են որոշման նախագծի 1-ին կետում պայմանագրի համարը «Ծ-12/12»-ի փոխարեն նշել «Ծ-02/12»	1. Վրիպակը ուղղված է

4/21.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱՎԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
 ___ մարտի 2012 թվականի N Մ-
 քաղ. Երևան -Ա

4/21.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱՎԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N Մ-079-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
 (Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի -ի N 3/3.8-1/-12 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի -ի N ԱԱ/3-4/-12 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 3-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2013-2013 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառուցվածքի պահպանման և հետագա զարգացման աջակցություն» ծրագրի մասին» N Մ-079-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00650292) 2012 թվականի փետրվարի 16-ին կնքված՝ N 160212/80 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լաբորատոր սարքավորման և պարագաների ձեռքբերում՝ 399000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00650292) 2012 թվականի փետրվարի 16-ին կնքված՝ N 160212/93 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լաբորատոր սարքավորումների ձեռքբերում՝ 390000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

4/21.2

0010, Երևան, Մելիք-Արամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

06.03.2012թ. № 3/3.8-1/2604-12

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 01.03.12թ. N 15/15.6/2723-12 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012թ. փետրվարի 3-ի N Մ-079-Ա («Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ») որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի («Իմնունոֆարմ» ՍՊԸ-ի հետ կնքված գործարք) հետ, հայտնում ենք, որ նշված որոշման նախագծի վերաբերյալ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան

034/5763-12
06.03.2012թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Ն Ա Գ Ա Հ Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

№ 3/3-4/1841-12
05.03.2012թ.

4/21.2

«Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 01.03.2012թ. թիվ 15/15.6/2723-12 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 3-ի ՄՍ-079-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

044/5556-12
05.03.2012թ.

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
2012 թվականի N Մ - - Ա
քաղ. Երևան

4/21.3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N Մ-401-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-
ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅՎԱԿԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի -ի N 3/3.8-1/-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի -ի N ԱԱ/3-4/-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-401-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Յուբոմ» ՍՊԸ -ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2012 թվականի փետրվարի 1-ին կնքված N 021/01/02/2012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի փետրվարի 1-ից մինչև 2013 թվականի փետրվարի 1-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 984000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



4/21.3

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

Ձեռ. № 1.03.12 № 3/3.8-1/2384-1.

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին


Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 28.02.12թ. N 15/15.1/2550-12 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010թ. հունիսի 18-ի N Մ-401-Ա («ՀՀՍՕՍ մանկական գյուղեր») հայկական բարեգործական հիմնադրամ) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի («Յուբոմ» ՍՊԸ-ի հետ կնքված գործարք) հետ, հայտնում եմք, որ նշված որոշման նախագծի վերաբերյալ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան

034/5780-12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ


0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

ԱՎԻՅ-Կ/1719-12 4/21.3
Լ.Յ.Լ

«Հ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ա. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 28.02.2012թ. թիվ 15/15.1/2550-12 գրությանը կից ներկայացված
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի ՄՄ-401-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր»
հայկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ
առաջարկություններ չկան:

 Ա. Ավակյան

Անուղղակի հարկերի բաժին, հեռ.594652

044/5791-12

ՆԱԽԱԳԻԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Շ Մ Ա Ր Մ
2012 թվականի Մ Մ - - Ա
քաղ. Երևան

4/21.4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 18-Ի Մ Մ-403-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-
ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի -ի N 3/3.8-1/ -12 և Հայաստանի
Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012
թվականի մարտի -ի N ԱԱ/3-4/ -12 եզրակացությունները, **ո ր ո շ մ ւ մ է.**

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական
հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն
անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի
«ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից
իրականացվող «Գյուղի, Իջևան քաղաքներում և Երևանի Քանաքեռ-Զեյթուն ու Արաբկիր
համայնքներում ընտանիքների ամրապնդում և մանկալքության կանխարգելում» N Մ-403-Ա
(2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1064-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ
հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Յուքոմ» ՍՊԸ -ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2012 թվականի փետրվարի 1-ին կնքված
N 021/01/02/2012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի
փետրվարի 1-ից մինչև 2013 թվականի փետրվարի 1-ը էլեկտրոնային հաղորդակցության
ծառայությունների մատուցում՝ 938500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

4/21.4

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

03.12 № 3138-1/2339-12

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 28.02.12թ. N 15/15.1/2545-12 գրության՝ կապված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010թ.
հունիսի 18-ի N Մ-401-Ա («ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական
հիմնադրամ) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի («Յուրոմ» ՍՊԸ-ի
հետ կնքված գործարք) հետ, հայտնում ենք, որ նշված որոշման նախագծի վերաբերյալ մեր
իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան

034/5204-12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՈՇԽԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

4/21.4

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

04/3-4/1690-12

29.02.12

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 28.02.2012թ. թիվ 15/15.1/2545-12 գրությանը կից ներկայացված
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի ՄՄ-401-Ա որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր»
հայկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ
հայտնում եմ.

Հիմք ընդունելով կից ներկայացված որոշման նախագծի 1-ին կետը,
առաջարկում եմ վերնագրում ուղղել վրիպակը՝ որոշման համարը «401»-ի փոխարեն
նշելով «403»:

Ա. Ալավերդյան

044/5748-12

«ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի N Մ-403-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («ՍՕԱ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
<p>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե – 29.02.12, N ԱԱ/3-4/1690-12</p> <p>1. Հիմք ընդունելով կից ներկայացված որոշման նախագծի 1-ին կետը, առաջարկում եմ վերնագրում ուղղել վիճակվել որոշման համարը «401»-ի փոխարեն նշելով «403»</p> <p>1. Վիճակվել ուղղված է</p>	

4/21.4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

___ մարտի 2012 թվականի N Մ-
քաղ. Երևան -Ա

4/21.5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի N Մ-130-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի -ի N 3/3.8-1/-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի -ի N ԱԱ/3-4/-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 29-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Կապեր եկեղեցու և կառավարության հետ» ծրագրի մասին» N Մ-130-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն:

«Բարսիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02230504) 2012 թվականի փետրվարի 6-ին կնքված՝ N WVA/CC GYUM/HT-12/001 (RB) պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Ծիրակի մարզի Ողջի համայնքի մանկապարտեզի ջեռուցման համակարգի սարքավորումների մատակարարման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 1235922 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

4/21.5

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

15.03.2012թ. № 3/3.8-1/3093-12

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 13.03.12թ. N 15/15.6/3232-12 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012թ. փետրվարի 29-ի N Մ-130-Ա («Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի (<<Բարսիս>> ՍՊԸ-ի հետ, կնքված գործարք) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան

034/6600-12
16.03.2012թ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

№ 3/3-4/2108-12
14.03.2012թ.

4/21.5

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 13.03.2012թ. թիվ 15/15.6/3232-12 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 29-ի N Մ-130-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

044/6359-12
14.03.2012թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

մարտի 2012 թվականի N Մ-
քաղ. Երևան -Ա

4/21.6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի -ի N 3/3.8-1/-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի -ի N ԱԱ/3-4/-12 եզրակացությունները, որոշում է:

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Պիկ լիցենզիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00804437) 2012 թվականի հունվարի 20-ին կնքված՝ N 1/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 18 աղբամանի պատրաստման աշխատանքների իրականացում՝ 761400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Պիկ լիցենզիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00804437) 2012 թվականի հունվարի 20-ին կնքված՝ N 2/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 11 մետաղական դարակի պատրաստման աշխատանքների իրականացում՝ 222530 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3) «Պիկ լիցենզիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00804437) 2012 թվականի հունվարի 20-ին կնքված՝ N 3/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 8 մոդուլային արկղի պատրաստման աշխատանքների իրականացում՝ 118400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

4/21.6

0010, Երևան, Մելիք-Արամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

06.03.2012թ. № 3/3.8-1/2606-12

Ձեռ. № _____

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 01.03.12թ. N 15/15.6/2724-12 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010թ. դեկտեմբերի 24-ի N Մ-954-Ա (<<Սիմոնյան>> կրթական հիմնադրամ) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի (<<Պիկ լիցենզիա>> ՓԲԸ-ի հետ կնքված գործարքներ) հետ, հայտնում եմք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանջուղազյան

034/5456-12
06.03.2012թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

№ 3/3-4/1840-12
05.03.2012թ.

4/21.6

«Կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 01.03.2012թ. թիվ 15/15.6/2724-12 գրությանը կից ներկայացված
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի ՈՒ-954-Ա
որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Սիմոնյան»
կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ
չկան:

Ա. Ավակյան

Անողջակի հարկերի բաժին, հեռ. 594652

044/5557.12
05.03.2012թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

— փետրվարի 2012 թվականի N Մ- -Ա
քաղ. Երևան

4/21.7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-043-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-
ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2012 թվականի փետրվարի -ի N 3/3.8-1/-12 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի -ի N ԱԱ/3-4/-12
եզրակացությունները, որոշում է:

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «ԱՌԴԱ» բարեգործական
հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի-ԱՌԴԱ» ծրագրի մասին՝ N Մ-043-Ա որոշման
մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում և կից ծրագրի 6-րդ ու 9-րդ կետերում «127.5 մլն դրամ»
բառերը փոխարինել «133.5 դրամ» բառերով.

2) ծրագրի 11-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ՝
«Նախատեսվող կազմակերպչական ծախսերը կկազմեն 6 մլն դրամ (բյուջեի մոտ
4.49 %-ը)՝ հիմնադրամի ֆինանսական գործունեության աուդիտի իրականացման համար:»:

2. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00057312)
կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի
զգալի նշանակություն՝

«Պրոգրես-աուդիտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01012831) 2012 թվականի փետրվարի 6-ին
կնքված՝ N 02-06/01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հիմնադրամի
2011 թվականի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ
ուսումնասիրության և հաշվեքննության աշխատանքների իրականացում՝ 500000 դրամի
չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար-
ություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

4/21.7

0010, Երևան, Մելիք-Աղայան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

24.02.2012թ. № 3/3.8-1/2204-12

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 21.02.12թ. N 15/15.6/2155-12 գրության՝ կապված «
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ.
փետրվարի 18-ի N Մ-043-Ա («ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ) որոշմամբ
հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի («Պրոգրես-
աուդիտ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագիր) հետ, հայտնում ենք, որ նշված որոշման
նախագծի վերաբերյալ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և
առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Արոմ Զանջուղազյան

034/4849-12

24.02.2012թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Ն Ա Գ Ա Հ Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

№ 166/3-4/1470-12
22.02.2012թ.

4/21.7

«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 21.02.2012թ. թիվ 15/15.6/2155-12 գրությանը կից ներկայացված
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի ՄՄ-043-Ա որոշման
մեջ փոփոխություններ կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրին
հարակից գործարքի մասին («ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)» որոշման
նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

044/4493-12

22.02.2012թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 փետրվարի 2011 թվականի N Մ-043-Ա
քաղ. երևան

«ԱՌԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՅ
ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ «ԳՅՈՒՄՐԻ-ԱՌԴԱ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի փետրվարի 8-ի N 3/3.8-1/1021-11, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2011 թվականի փետրվարի 8-ի N 01/14-3.2-64/598-11, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի փետրվարի 8-ի N ԱԱ/3-4/591-11 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 4-ի N 01/419-11 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) իրականացվող՝ 127.5 մլն դրամ ընդհանուր արժողությամբ «Գյումրի-ԱՌԴԱ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայրուզազարդ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2006 թվականի ապրիլի 10-ին կնքված՝ N 02204061363 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի ընթացքում բնական գազի մատակարարում՝ 400000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի հունվարի 8-ին կնքված՝ N 120649 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի ընթացքում էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 100000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2008 թվականի փետրվարի 4-ին կնքված՝ N 112817439 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի ընթացքում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 70000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.


4) «Շիրակ ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05531223) 2010 թվականի հունվարի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2011 թվականի ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 100000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին և Գյումրու քաղաքապետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

4/21.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Գործադիր տնօրեն Հ. Ստեփանյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
«ԳՅՈՒՄԻ-ԱՌ-ԴԱ»

2/20

4/21.8

մարտի 2012 թվականի N Մ-
բաղ. Երևան -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011
ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(«Այբ» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի-ի N 3/3.8-1/-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի -ի N ԱԱ/3-4/-12 եզրակացությունները, որ ո շ ու մ է.

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» ավագ դպրոց»՝ N Մ-1063-Ա (2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1089-Ա որոշման խնդրագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Կետ Արքիթեթթ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00253052) 2011 թվականի նոյեմբերի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էաքիզային նախագծերի և աշխատանքային ծրագրերի մշակում՝ 1.800.000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Թեքնո Քազա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00862438) 2011 թվականի դեկտեմբերի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 15.584.000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ար և Ար Դիզայն Քնաթարքըն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01547716) 2012 թվականի հունվարի 09-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 58.425.120 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Միկմետայ» ՓԲԸ-ի «Արևմուտք» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 02233484) 2012 թվականի հունվարի 13-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինանյութի մատակարարում՝ 8.790.000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Գաշես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04222383) 2012 թվականի հունվարի 13-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 51.306.360 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

1. Ծրագրի նպատակը	Գյուճարի բիլ «ԱՌ-ԴԱ» նախակրթարանի 80 սաների և 18 աշխատակիցների կենցաղային պայմանների բարելավում:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Հարկային և մաքսային արտոնությունների տրամադրում: Բարեգործին խրախուսում:
3. Բարեգործը	Ամերիկյան «Հայ ավետարանի առաքելություն» ոչ առևտրային կազմակերպություն, ԱՄՆ, ք. Փասադենա:
4. Ծրագիրը կատարողը	«ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամ, Երևան, Պարույր Սևակի փող. 9, ՀՎՀՀ՝ 00057312:
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի: Մոցիալ-կրթական ոլորտ:
6. Ծրագրի բյուջեն	127,5 մլն դրամ: ✓
7. Բարեգործություն ստացողը	Գյուճարու քաղաքապետարան:
8. Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը շարունակական է: Այն իրականացվում է սկսած 2001 թվականից: Ծրագրի այս հատվածն իրականացվում է 01.01.2011 թ.- 31.12.2015 թ. ժամանակահատվածում:
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Նախակրթարանի բոլոր ծախսերի ֆինանսավորում և բարեգործական օգնության տրամադրում՝ 127,5 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի:
10. Զեղք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող զինը	- սնունդ – 30 մլն դրամ, առանց ԱԱՀ-ի, յուրաքանչյուր տարի 6 մլն դրամ. - աշխատավարձ – 57,0 մլն դրամ, յուրաքանչյուր տարի 11,4 մլն դրամ. - կոմունալ ծախսեր- 4,0 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի, յուրաքանչյուր տարի 0,8 մլն դրամ. - տնտեսական և բժշկական օգնության ծախսերի ֆինանսավորում- 1,5 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի, յուրաքանչյուր տարի 0,3 մլն դրամ. - բարեգործական օգնության ներմուծում /հագուստ, սնունդ, կոշիկ, կահույք, խաղալիք, եիզ, պարագաներ և այլն/- 35 մլն դրամ՝ առանց ԱԱՀ-ի, յուրաքանչյուր տարի 7 մլն դրամ:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Ծրագրի համար լրացուցիչ կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում, ծրագիրն իրականացվում է հիմնադրամի ընդհանուր կազմակերպչական ծախսերի սահմաններում:
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների հետ	ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, Գյուճարու քաղաքապետարան:
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ ԿԹԾՀՀ ներկայացվող հաշվետվությունների և «ԱՌ-ԴԱ» բի հոգաբարձուների խորհրդի անդամների պարբերական այցելությունների միջոցով:



6) «Կարին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02529731) 2012 թվականի հունվարի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող սպեցիֆիկացիային (հավելված 1) համապատասխան ապրանքների մատակարարում՝ 279.300 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Մեդիսար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02555635) 2012 թվականի հունվարի 18-ին կնքված N 29/12-11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պայմանագրում ներկայացված ցանկի համապատասխան ապրանքների մատակարարում՝ 497.600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Ակուստիկայի Գիտական կենտրոն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02202304) 2012 թվականի հունվարի 20-ին կնքված N 01/2012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պատվիրատուի տեխնիկական առաջադրանքով պայմանավորված աշխատանքների իրականացում՝ 4.687.500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Կետ Արքիթեքթ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00253052) 2012 թվականի փետրվարի 01-ին կնքված N 120201 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀՀ քաղ. երևան, Արաբկիր համայնքի, Թբիլիսյան խճուղի 11/11 հասցեում գտնվող շինության շինարարական աշխատանքների կառավարման և հեղինակային հսկողության իրականացում՝ 6.000.000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Կետ Արքիթեքթ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00253052) 2012 թվականի փետրվարի 14-ին կնքված N 120214 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ՀՀ քաղ. երևան, Արաբկիր համայնքի, Թբիլիսյան խճուղի 11/11 հասցեում գտնվող շինության արտաքին ջրահեռացման ցանցի նախագծման աշխատանքների իրականացում՝ 200.000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

4/21.8



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ ՈՐ Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

4/21.8

0010, Երևան, Մեյք-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

1.03.2012թ N 3/3.8-1/2338-1.

Ձեռք N° _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահի
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 27.02.12թ. N 15/15.8/2444-12 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ. նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա (<<Այբ>> կրթական հիմնադրամ) որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի (<<Կետ Արքիթեքթ>> ՓԲԸ-ի, <<Թեքնո Քազա>> ՍՊԸ-ի, <<Ար և Ար Դիզայն Քնաթրաքչն>> ՍՊԸ-ի, <<Միկմետալ>> ՓԲԸ-ի, <<Գաշես>> ՍՊԸ-ի, <<Կարին>> ՍՊԸ-ի, <<Մեդիասար>> ՍՊԸ-ի, <<Ակուստիկայի Գիտական կենտրոն>> ՓԲԸ-ի և <<Կետ Արքիթեքտ>> ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրեր) հետ, հայտնում ենք, որ նշված որոշման նախագծի վերաբերյալ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանցուղազյան

034/5205-12
1.03.2012թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
2012 թվականի N Մ-
բաղ. Երևան

-Ա

4/21.9

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

N: ՉԿԿ/3-4/1640-12
28.02.2012թ

4/21.8

«Հ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ա. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 27.02.2012թ. թիվ 15/15.8/2444-12 գրությանը կից ներկայացված
«Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի NՄ-1063-Ա
որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Այբ» կրթական
հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. ԱղաՎերյան

Անողակի հարկերի բաժին, հեռ.594652

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-1065-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՏՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության 2012 թվականի -ի N 3/3.8-1/-12 և Հայաստանի
Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012
թվականի -ի N ԱԱ/3-4/-12 եզրակացությունները, որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 30-ի «Ամերիկայի Հայ
օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Կրթավճարներ»
ծրագրի մասին» N Մ-1065-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 1-ին պարբերությունում «1700000
դրամի չափով» բառերը փոխարինել «420000 դրամի չափով» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետում ավելացնել պարբերություն.

«Ակնկալում ենք ինտերնետ կապի ծառայության համար 01.03.2012 - 31.12.2012
թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 1280000 դրամի չափով՝

պայմանագիր N 0170042, կնքված 28.02.2012թ. «Յուրում» ՍՊԸ-ի (ք. Երևան, Տերյան
19/4, ՀՎՀՀ՝ 00024873) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի (ք.
Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ՝ 00024873) միջև».

3) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում «1700000 դրամի չափով» բառերը
փոխարինել «420000 դրամի չափով» բառերով:

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի
կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն

044/4961-12
28.02.2012թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Ն Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

4/21.9

0010, Երևան, Մեխրե-Աղամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

7.03.12 № 3/32-1/2682-12

Ձեռ № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

կապված է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի
իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Յուբոմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2012 թվականի փետրվարի 28-ին կնքված
պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի մարտի 1-ից մինչև
դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 1280000
դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտե:

4/21.9

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 05.03.12թ. N 15/15.1/2902-12 գրության՝ կապված ՀՀ
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011թ.
նոյեմբերի 30-ի N Մ-1065-Ա (<<Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի
մասնաճյուղ>>) որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու և նույն
ծրագրին հարակից գործարքի մասին որոշման նախագծի (<<Յուբոմ>> ՍՊԸ-ի հետ կնքված
գործարքներ) հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում
դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանչուդայան

034/5910-12



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆՔԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՆԱԽԱԳԻԾ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

4/21.9

Ձ/3-4/1958-12
7.03.12

«Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին»

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 05.03.2012թ. թիվ 15/15.1/2902-12 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 30-ի ՈՍ-1065-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու ու նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Աղաճերյան

044/5906-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

2012 թվականի N Մ-
քաղ. Երևան

-Ա

4/21.10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-282-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՆ ԲԱՐԵԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագիր)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի փետրվարի 21-ի N ՍՔ/15-1/1342-12, փետրվարի 29-ի N ՍՔ/15-1/1596-12 և մարտի 1-ի N ՍՔ/15-1/1623-12 գրություններն ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 28-ի N Յ/3.8-1/2250-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 24-ի N ԱԱ/3-4/151-12 և մարտի 2-ի N ԱԱ/3-4/1803-12 եզրակացությունները, որոշում է:

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-282-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) սույն որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 6-րդ ենթակետում «46300 եվրո» բառերը փոխարինել «36300 եվրո» բառերով:

2) սույն որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետը լրացնել նոր 7-րդ ենթակետով՝ «Խորհրդատվական և պլանավորման ծառայություններ - 10000 եվրո» հետևյալ բովանդակությամբ:

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00040569) 2012 թվականի հունվարի 23-ին կնքված՝ ծառայությունների վճարովի մատուցման N AT-AU-002-12 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտի իրականացում՝ 990000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշման ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

4/21.10

0010, Երևան, Մելիք-Աղայան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

28.02.12 № 3/384/2250-12

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պրն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 23.02.12թ. N 15/15.4/2273-12 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010թ. ապրիլի 30-ի N Մ-282-Ա որոշումներով («ՀՀ տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի»), դրամաշնորհային ծրագիր) հաստատված ծրագրերին հարակից գործարքի մասին որոշման նախագծի («Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագիր) հետ, հայտնում ենք, որ նշված որոշման նախագծի վերաբերյալ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Զանցուղայան

1034/4991-12
28.02.12թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

1522/3-4/15-13-12
24.02.12թ.

4/21.10

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ա. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 23.02.2012թ. թիվ 15/15.4/2273-12 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի ՄՄ-282-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագիր)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Կից ներկայացված «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրով նախատեսված աուդիտի ծառայությունների ձեռք բերում վերը նշված ծրագրով նախատեսված չէ: Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ եմ համարում ներկայացնել համապատասխան պարզաբանումներ:

Ա. Ավակյան

1044/4657-12
24.02.12թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ 4/21.10

*N 282/3-4/1803-12
2.03.12թ.*

0015, Երևան, Մ.Խորենացու 3,
Հեռ. 50 20 20, 59 46 05

«Առողջապահության նախարարության
աշխատակազմի ղեկավար պարոն Ա. Քրմոյանին

պատճենը՝ «Կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ա. Տեր-Սիմոնյանին

Ի պատասխան Ձեր 29.02.2012թ. N ՍՔ/15-1/1596-12 և 01.03.2012թ. N ՍՔ/15-
1/1623-12 գրությունների հայտնում եմ.

«Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի NU-282-Ա որոշմամբ հաստատված
«Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրում
առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ չկան:

Ա. Ալավերդյան

Անողակի հարկերի բաժին, հեռ.594652

*N 044/5440-12
2.03.12թ.*



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

4/21.10

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ info@moh.am

01.03.12, N 2/Ք/15-1/1623-12
Ձեր N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ Ա.ԱԼԱՎԵՐԴՅԱՆԻՆ


ՊԱՏՃԵՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ալավերդյան

Ի լրումն 2012 թվականի փետրվարի 29-ի N ՍՔ/15-1/1596-12 գրության հայտնում
եմ, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Առողջապահական
համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին N Մ-282-Ա որոշմամբ
հաստատված ծրագրի 10-րդ կետի 6-րդ ենթակետով նախատեսված տեղեկատվական

նյութերի մշակման, սպագրության, համակարգչային մշակման և ներդրման համար նախատեսված 46.300 եվրո գումարը հարկավոր է փոխարինել 36.300 եվրո գումարով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



Ս.ՔՐՄՈՅԱՆ

4/21.10

Կատարող՝
 ՀՀ ԱՆ ԳԿԾԽ իրավաբան
 Մարիամ Էփրեկյան
 Հեռ.՝ 54 36 51

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի N ԱՄ-228-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱԱ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն») որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

N020/5267-12
 01.03.12թ.

Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը	Հիմնավորում
<p>Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե</p> <p>Որոշման նախագծի վերաբերյալ հայտնում են. կից ներկայացված «Գրանթ Թրոնթոն» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրով նախատեսված առօրի ծառայությունների ձեռք բերում վերը նշված ծրագրով նախատեսված չէ: Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ են համարում ներկայացնել համապատասխան պարզաբանումներ:</p> <p>Ի պատասխան ՀՀ առողջապահության նախարարության 29.02.2012թ. N ԱՔ/15-1/1596-12 և 01.03.2012թ. N ԱՔ/15-1/1623-12 գրությունների հայտնում են որ. ծրագրում առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ չկան:</p>	<p>Հիմնավորում</p> <p>Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2012 թվականի առողջապահության նախարարության 2012 թվականի փետրվարի 29-ի N ԱՔ/15-1/1596-12 և մարտի 1-ի N ԱՔ/15-1/1623-12 գրությունները նախագծում ավելացվել է կետ՝ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:</p>

4/21.10

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

մարտի 2012 թվականի N Մ-
բաղ. Երևան -Ա

4/22.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1156-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Կ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

4/22.1

0010, Երևան, Մեյիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

06.03.2012թ. № 3/3.8-1/2570-12

Ձեր № _____

Հայաստանի Հանրապետության
